

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

<https://doi.org/10.59982/18294359-26.1-em-19>

Արմենուհի Ալբերտի Հարությունյան

Հայցորդ

ՀԵՀ, Հանրային և միջազգային իրավունքի ամբիոն

arm1.harut@gmail.com

Ամփոփագիր

ԵՄ Արդարադատության դատարանը եվրոպական համայնքների հենց սկզբնավորման պահից խթանել է ինտեգրման գաղափարը և եղել է ինտեգրման ամենանշանակալի գործոններից մեկը: Եվրոպական ինտեգրման շարժառիթները վճռորոշ ազդեցություն են ունեցել ԵՄ Արդարադատության դատարանի դատողությունների վրա: Իր նախադեպային որոշումներով ԵՄ Արդարադատության դատարանը ձևակերպել է ԵՄ իրավակարգի ինքնավարության սկզբունքի ամենահիմնարար հատկանիշը՝ այն, որ ԵՄ-ն գործում է անկախ իրեն անդամակցող պետությունների ներպետական օրենքներից, և այս առնչությամբ հողվածում առանձնահատուկ ուսումնասիրման առարկա է դարձել Եվրոպական միության իրավակարգի ինքնավարության (ավտոնոմիայի) սկզբունքը: Այս սկզբունքի կարևորությունը ակնառու է նաև այն փաստի գոյությամբ, որ այն գործում է ԵՄ իրավունքի ստեղծման և կիրառման բոլոր փուլերում:

Այս համատեքստում ակադեմիական հանրույթը տարբեր հարցադրումներ է արել, օրինակ՝ թե ինչո՞ւ է ինտեգրումն այդպիսի նշանակություն կրում ԵՄ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքում, ո՞րն է դրա տեղը ԵՄ իրավական նորմերի համակարգում, հնարավո՞ր է արդյոք եվրոպական ինտեգրումը նկարագրել որպես արժեք, թե՞ դա ԵՄ-ի նպատակն է: Հողվածը նվիրված է այս կարևորագույն հարցադրումների պատասխաններին, դրանց վերաբերյալ ձևավորված տարաբնույթ, երբեմն՝ հակասական կարծիքների ուսումնասիրմանը, որոնք բացահայտում են ԵՄ Արդարադատության դատարանի դերը ԵՄ կայացման գործում և դրա ազդեցությունը ինտեգրման գործընթացների վրա:

Հիմնաբառեր. ԵՄ արդարադատության դատարան, եվրոպական ինտեգրում, ԵՄ արդարադատության դատարանի նախադեպային իրավունք, Եվրոպական միության գործունեության մասին պայմանագիր, ԵՄ իրավակարգի ինքնավարություն, վերազգային կազմակերպություն:

Ներածություն

Եվրոպական Միությունը, ինչպիսին այն կա և հայտնի է այսօր, երկարատև զարգացման արդյունք է: ԵՄ վերազգային համագործակցության ձևը հիմնված է անդամ պետությունների ինքնիշխան լիազորությունների մի մասը կազմակերպությանը փոխանցելու սկզբունքի վրա, որն այդ լիազորություններն իրականացնում է որպես անկախ իրավաբանական անձ: Վերազգային ինտեգրացիոն մեթոդի ընտրությունն իրենից ներկայացնում է էական նահանջ միջազգային հանրային իրավունքի դասական սկզբունքներից՝ պետությունների հավասար ինքնիշխանությունից:

Եվրոպական Միությանը տրվել է առանձնահատուկ բավարար ինքնավարություն և հնարավորություն՝ իրեն վերապահված խնդիրները կառավարելու ամբողջությամբ և առանց անդամ պետությունների միջամտության: Սա վերազգային լինելու հիմնական արդյունքն է: Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող վերազգային կազմակերպությունն անկախ է և ինքնավար իր անդամ պետություններից և որոշակի առումով այն «վերադաս» է պետությունների նկատմամբ [Hamulak, Stehlik, 7-8]: Այս «վերադասությունը» ակնհայտ է դառնում ԵՄ իրավունքի ստեղծման և կիրառման բոլոր փուլերում:

Եվրոպական միության իրավակարգի ինքնավարության (ավտոնոմիայի) սկզբունքը լայն և անորոշ հասկացություն է: Չնայած իրավագիտության մեջ դրա վերլուծությանը՝ նրա բովանդակությունն ու շրջանակները դեռևս շփոթ են առաջացնում: Ինքնավարության դոկտրինի հիմքերը դրվել են Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) վաղ դատական պրակտիկայում, քանի որ սկզբունքն ինքնին բխում է բացառապես ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքից: Այս համատեքստում հիշատակման արժանի է Costa v. ENEL գործը, որով Դատարանը հայտարարեց, որ ԵՄ իրավունքը սկիզբ է առնում Պայմանագրերից, որոնք իրավունքի անկախ աղբյուր են [Case 6/64, Flaminio Costa v. ENEL [1964]]: Հետագա ներպետական իրավական դրույթները չէին կարող գերակայել ԵՄ իրավունքի նկատմամբ, քանի որ դա կզրկեր այդ իրավունքն իր համայնքային բնույթից և հարցականի տակ կդնէր հենց ԵՄ-ի իրավական հիմքը: Այսպիսով, սահմանելով ԵՄ իրավունքի գերակայությունը անդամ պետությունների ազգային օրենքների նկատմամբ, ԵՄԱԴ-ը ձևակերպեց ԵՄ իրավակարգի ինքնավարության սկզբունքի ամենահիմնարար հատկանիշը՝ այն գաղափարը, որ ԵՄ-ն գործում է Պայմանագրերով սահմանված կանոնների համաձայն՝ անկախ անդամ պետությունների ազգային օրենքներից, իսկ ավելի ուշ՝ անկախ միջազգային իրավունքից բխող ազդեցություններից, եթե դրանք անհամատեղելի են ԵՄ պայմանագրերի հետ [Opinion 1/91, supra note 12]: Դրանով իսկ տարանջատվեցին ինքնավարության սկզբունքի ներքին (ինքնավարություն ներպետական իրավունքից) և արտաքին (ինքնավարություն միջազգային իրավունքից) տարրերը:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համաձայն վերապահված լիազորությունների սկզբունքի՝ ԵՄ պետք է գործի միայն Պայմանագրով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում: Միության լիազորությունների ամբողջությունը հիմնված է անդամ պետությունների կողմից դրանց վերապահման տրամաբանության վրա: Այնուամենայնիվ, հնարավոր չէ կոնկրետ և հստակ սահմանել բոլոր այն իրավասությունները, որոնք պետք է իրականացվեն ինտեգրման նպատակներին հասնելու համար:

Եվրոպական միության լիազորությունների ճկունության սահմանումն իր իրավական հիմքն ունի՝ այսպես կոչված ենթադրվող լիազորությունների (implied powers) տեսության մեջ, որը ստեղծվել է ԵՄԱԴ նախադեպային իրավունքով (281/85 Գերմանիան ընդդեմ Հանձնաժողովի [Judgment of 9 July 1987], C-176/03 Հանձնաժողովն ընդդեմ Խորհրդի [Judgment of 13 September 2005], Գլխավոր փաստաբան Մազակի եզրակացությունը C-44/05 գործով):

Ենթադրվող լիազորությունների տեսության համաձայն՝ Միության մարմինները պետք է գործեն նույնիսկ այնպիսի իրավիճակներում, երբ Պայմանագրում բացակայում է Միության լիազորություն սահմանող հստակ դրույթ: Ենթադրվող լիազորությունների սկզբունքի կիրառման հիմնարար պայմանն այն է, որ տվյալ գործունեությունն անհրաժեշտ լինի ինտեգրման խնդիրները լուծելու և նպատակներին հասնելու համար և այն պետք է պարտադիր բխի Պայմանագրերի որոշ դրույթների բովանդակությունից, նպատակներից կամ իմաստից:

ԵՄ պետք է օգտագործի ենթադրյալ լիազորությունները թե՛ Միության ներսում իրավական կարգավորումների ընդունման, թե՛ արտաքին հարաբերություններում միջազգային պայմանագրերի կնքման համար: Արտաքին հարաբերություններում ենթադրյալ լիազորությունների տեսությունը հիմնված է Դատարանի նախադեպային իրավունքի վրա ERTA Եզրակացություն 1/94 [Opinion 1/94], իսկ այսօր այն արդեն ամրագրված է ԵՄԳՊ 3-րդ հոդվածի 2-րդ կետում) [Cf. case 22/70 Commission v. Council, Judgment of March 31]: ERTA գործը պատմական նախադեպ է, որով հաստատվեց, որ երբ ԵՄ ներքին կանոններ է սահմանում որևէ ոլորտում, անդամ պետություններն այլևս իրավունք չունեն այդ նույն հարցով առանձին պայմանագրեր կնքել երրորդ երկրների հետ (սույն նախադեպին կանդրադառնանք ստորև):

ԵՄ լիազորությունների ընդլայնումը Արդարադատության դատարանի նախադեպային որոշումներով միանշանակ չի ընկալվել տարբեր իրավաբան գիտանականների և հետազոտողների կողմից: Այդուհանդերձ, հաստատելով այն ընդհանուր սկզբունքը, որ ԵՄ-ն գործում է բացառապես երկու հիմնական սահմանադրական հիմք հանդիսացող պայմանագրերի՝ Եվրոպական միության գործունեության մասին (անգլերեն՝ Treaty on the Functioning of the European Union – հապավումը՝ TFEU) և Եվրոպական միության մասին (ԵՄՊ կամ TEU) Պայմանագրերի հիման վրա, ԵՄԱԴ-ը ընդլայնեց այդ սկզբունքի գործողության շրջանակը՝ մանրամասնելով, թե Պայմանագրերում ամրագրված որ հատկանիշները չեն կարող շոշափվել ԵՄ-ի կողմից կնքված միջազգային համաձայնագրերով: Այդ հատկանիշները հայտնի դարձան որպես ԵՄ իրավունքի էական բնութագրիչներ: Դրանք մշակվել են ԵՄԱԴ-ի կողմից մի

շարք գործերով՝ միջազգային համաձայնագրերի և Պայմանագրերի համատեղելիությունը գնահատելիս: Յուրաքանչյուր նոր գործով ինքնավարության սկզբունքով պաշտպանվող բնութագրիչների շրջանակը Դատարանի կողմից ընդլայնվում էր: Կարծիք 1/76-ում ԵՄԱԴ շեշտեց իր բացառիկ իրավունքը՝ տալու ԵՄ իրավունքի վերջնական մեկնաբանությունը, որպեսզի հնարավոր լինի խուսափել ԵՄ իրավունքի տարամետ մեկնաբանություններից [Opinion 1/76, supra note 17]: Կարծիք 1/91-ում, գնահատելով Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) դատարանի համատեղելիությունը Պայմանագրերի հետ, ԵՄԱԴ-ը ներմուծեց ԵՄ իրավակարգի ինքնավարության (ավտոնոմիայի) հայեցակարգը [Opinion 1/91, op. cit., para. 30]: Այս անգամ դատարանն ընդգծեց, որ Պայմանագրերով սահմանված ԵՄ ինստիտուտների լիազորությունների բաշխումը չպետք է ենթարկվի որևէ բացասական ազդեցության [Opinion 1/91, op. cit., para. 35]: Կարծիք 1/00-ում ԵՄԱԴ-ը հայտարարեց, որ Ընդհանուր ավիացիոն տարածքի մասին համաձայնագիրը չպետք է խաթարի Պայմանագրերի այն նպատակը, ըստ որի՝ ԵՄ իրավունքը պետք է մեկնաբանվի միասնական կերպով [Opinion 1/00, supra note 13, para. 11]: Կարծիք 1/09-ում ԵՄԱԴ-ը զարգացրեց ԵՄ դատական համակարգի հասկացությունը՝ ազգային դատարաններին անվանելով «ԵՄ իրավական համակարգի պահապաններ» [Opinion 1/09, supra note 17, para. 66], որոնց լիազորությունները և դիրքը չեն կարող շոշափվել ԵՄ միջազգային համաձայնագրերով: Կարծիք 2/13-ում Դատարանը վճռեց, որ ՄԻԵԿ-ին միացման համաձայնագիրը կարող է բացասաբար անդրադառնալ ԵՄ դատական համակարգի բնութագրիչների, լիազորությունների բաշխման, հիմնարար իրավունքների, փոխադարձ վստահության, անկեղծ համագործակցության [Opinion 2/13, supra note 16] և, հետևաբար, ԵՄ իրավակարգի ինքնավարության վրա: Ինչպես ակնհայտ է այս գործերից, ինքնավարությունը աստիճանաբար վերածվել է սկզբունքների մի բարդ ցանցի, որը կազմում է ԵՄ ողջ իրավական համակարգի հիմքը:

Այնուամենայնիվ, ակադեմիական հանրույթը դեռևս միակարծիք չէ այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք Դատարանը, ընդլայնելով ինքնավարության շրջանակները, գործում է Պայմանագրերով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

Սույն հոդվածը նպատակ ունի պատասխանել նաև այս հարցին իրավական վերլուծության մեթոդով՝ մանրամասնելով ԵՄ իրավակարգի ինքնավարության սկզբունքը, պարզաբանելով «դատական ակտիվիզմի» վերաբերյալ մոտեցումները: Վերլուծությունն իրականացվում է մի քանի քայլով. նախ՝ քննարկվում է ինքնավարության փոխհարաբերությունը եվրոպական ինտեգրման գործընթացի հետ՝ նպատակ ունենալով պարզել, թե ինչո՞ւ է ինքնավարությունն անհրաժեշտ և ի՞նչ նպատակի է այն ծառայում: Երկրորդ՝ համառոտ կերպով համակարգելով ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքում հաստատված տարբեր տարրերը, որոնք սահմանազատում են նրա իրավազորությունը վեճերի լուծման այլ մարմիններից, որոշվում է ինքնավարության բովանդակության շրջանակը: Երրորդ՝ քննարկելով ԵՄԱԴ-ի մեթոդաբանական մոտեցումը իրավազորության սահմանազատմանը վերաբերող գործերում,

փորձ է արվում պատասխանել այն հարցին, թե արդյոք ինքնավարության դոկտրինը սահմանող ԵՄԱԴ-ի որոշումները եղել են Պայմանագրերով նախատեսված ԵՄ իրավասությունների սահմաններում:

Այս համատեքստում չենք կարող չանդրադառնալ մի հայեցակարգի, որը կոչվում է դատական ակտիվիզմ (Judicial activism): Դատական ակտիվիզմը իրավական հայեցակարգ է, որը նկարագրում է դատարանների այնպիսի գործելաոճը, երբ դատավորները ոչ թե պարզապես կիրառում են գրված օրենքը, այլ ակտիվորեն մասնակցում են նոր իրավական նորմերի ստեղծմանը կամ քաղաքականության ձևավորմանը:

Անդրադառնալով դատական ակտիվիզմին և ԵՄԱԴ կողմից ԵՄ լիազորությունների ընդլայնմանը՝ հանրահայտ դանիացի իրավագետ Հյալտե Ռասմուսենը նշել է. «Պատմական նախադեպը ցույց է տալիս, որ դատական ակտիվիզմը կարող է լինել կոնսենսուս ձևավորող: Եթե այն չի հասնում դրան, ապա դատական որոշումների ընդունելիության նվազումը սպառնում է սոցիալական անկայունությամբ, անհնազանդությամբ և դատական իշխանության բացահայտ արհամարհմամբ: Դատարանի գործունեության նույնիսկ չնչին մասը կարող է խախտել դատական գործառույթի ներհատուկ սահմանափակումներն այնպիսի ձևով, որը կհանգեցնի լուրջ սոցիալական վնասի» [Hjalte Rasmussen, 5-17]:

Ըստ Հյալտե Ռասմուսենի՝ դատարանի կողմից քաղաքականության մշակմանը կամ ձևավորմանը մասնակցությունը (Judicial policymaking) ժամանակի ընթացքում սահմանվել է տարբեր ձևերով: Փորձեր են արվել նաև նույնականացնել և դասակարգել դատական քաղաքականության մշակումը ըստ հետևյալի՝ ա) արդյո՞ք տվյալ դատարանը շեղվում է նախադեպից կամ փաստացիորեն բեկանում է այն, բ) արդյո՞ք դատական ստեղծագործական մոտեցումը դրսևորվում է սահմանադրական իրավունքի մեկնաբանման, օրենսդրական խնդիրների, թե՛ իրավական բացերի լրացման ժամանակ, գ) արդյո՞ք դատական քաղաքականության մշակումն իր էությամբ պահպանողական է՝ հանրային քաղաքականության ընտրությանն առնչվող իր որոշումների արդյունքների տեսանկյունից, թե՛ այն լիբերալ է [Joel]:

Վերլուծության տարբեր մակարդակների ներկայացումը, որոնցով անխուսափելիորեն պետք է ընթանա ԵՄ-ում դատական ակտիվիզմի ուսումնասիրությունը, սկսվել է Ժան-Վիկտոր Լուիի, Ժորժ Վանդերսանդենի և Միշել Վալերրուկի կողմից 1981 թվականին արված հետևյալ դիտարկումից. «Dans l'ensemble, quoique l'interprétation donnée par la Cour aille sans doute plus loin que n'ayant été envisagé par les auteurs du traité, il ne semble pas qu'on puisse lui en faire grief.» «Ընդհանուր առմամբ, թեև Դատարանի կողմից տրված մեկնաբանությունը, անկասկած, ավելի հեռուն է գնում, քան նախատեսված էր Պայմանագրի հեղինակների կողմից, չի թվում, թե կարելի է դա նրան որպես մեղք վերագրել կամ դրա համար նրան մեղադրել» [Cf.]- Louis et al, 69]:

ԵՄ Արդարադատության դատարանը՝ որպես Եվրահիստեգրման շարժիչ ուժ

Ժամանակակից պատմության ընթացքում Եվրոպական մայրցամաքը տուժել է համաշխարհային մասշտաբի երկու և բազմաթիվ տարածաշրջանային պատերազմներից ու հակամարտություններից: Տնտեսական ինտեգրման գաղափարն առաջին հերթին առաջարկվեց որպես հակամարտություններից խուսափելու լուծում պոտենցիալ մրցակիցների (անգամ թշնամիների) տնտեսական միության միջոցով, ինչը թույլ կտար նրանց հաղթահարել միջազգային բախումները և ապահովել խաղաղ համակեցությունն ու բարգավաճել [Bradford and Posner, 24]: Երբ պետությունները տնտեսապես փոխկապակցված են, նրանց համար այլևս ձեռնտու չէ միմյանց հետ ռազմական հակամարտություն ունենալը, քանի որ նրանք ավելին կկորցնեն, քան հնարավոր կլինի շահել: ԵՄ հիմնադրումից ի վեր ինտեգրված տարածքներում հակամարտությունների ռազմական լուծումն անհետացել է: Սա ծանրակշիռ ապացույց է այն մասին, որ տնտեսական ինտեգրումը կարող է կանխել հակամարտությունը:

Ինքնավարության գոյությունն ու Էվոլյուցիան անխզելիորեն կապված են Եվրոպական ինտեգրման Էվոլյուցիայի հետ: ԵՄԱԴ-ը Եվրոպական համայնքների հենց սկզբնավորման պահից խթանել է ինտեգրման գաղափարը և եղել է ինտեգրման ամենանշանակալի գործոններից մեկը: Եվրոպական ինտեգրման շարժառիթները վճռորոշ ազդեցություն են ունեցել ԵՄԱԴ-ի դատողությունների վրա [Alejandro]: Այս համատեքստում կարող է հարց առաջանալ՝ ինչո՞ւ է ինտեգրումն այդպիսի նշանակություն կրում ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքում: Ավելի կարևոր է՝ ո՞րն է դրա տեղը ԵՄ իրավական նորմերի համակարգում: Հնարավո՞ր է արդյոք Եվրոպական ինտեգրումը նկարագրել որպես արժեք: Թե՞ դա ԵՄ-ի նպատակն է: Կա՞ն արդյոք այլ իմաստներ այս հայեցակարգի հետևում:

Ակադեմիական հանրույթը տարակարծիք է նաև այն հարցում, թե արդյոք ինտեգրումն ամրագրված է առաջնային իրավունքում: Իրականում Պայմանագրերի նախաբանի առաջին պարբերությունը ինտեգրումը դիտարկում է որպես Եվրոպական համայնքների հիմնադրման առաջնային պատճառ: Հատկանշական է, որ «Եվրոպայի ժողովուրդների միջև էլ ավելի սերտ միության» [Treaty on European Union, Article A] ստեղծման գործընթացը նույնպես մի արտահայտություն է, որը մատնանշում է ինտեգրման գործընթացը: Բացի այդ, առկա է անդամ պետությունների ձգտումը՝ խթանելու «տնտեսական ինտեգրումը», և անորոշ հրավեր՝ ձեռնարկելու հետագա քայլեր Եվրոպական ինտեգրումն առաջ մղելու համար: Թեև պայմանագրերը թվարկում են ԵՄ արժեքները [Treaty on European Union, Article B], ինտեգրումն այդ ցանկում չկա, ինչը թույլ է տալիս կարծել, որ ինտեգրումը չպետք է դիտարկվի որպես ԵՄ արժեքներից մեկը:

Այստեղ է, որ ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքը տվել է իր պատասխանները ԵՄ-ում ինտեգրման նշանակությունը որոշելու համար: Դատարանն իր պրակտիկայում կիրառում է

երկու տարբեր հայեցակարգեր՝ իրավունքների ինտեգրում և տնտեսական ինտեգրում: Ստորև ներկայացված է այդ հայեցակարգերից յուրաքանչյուրի հակիրճ նկարագրությունը:

Նախ՝ իրավունքների ինտեգրումը հիմք հանդիսացավ ԵՄ իրավունքի գերակայության դոկտրինի զարգացման համար: Սկսած Costa/ENEL գործից՝ Դատարանն ընդգծել է, որ ԵՄ իրավունքների ինտեգրումը անդամ պետությունների ներպետական իրավունքին անհնարին է դարձրել անդամ պետությունների կողմից միակողմանիորեն նախապատվություն տալը հետագա ազգային միջոցներին՝ ԵՄ իրավունքի միջոցների նկատմամբ [Case 6/64, Flaminio Costa v. ENEL, supra note 91, p. 593-4.]: Այսպիսով, իրավունքների ինտեգրումը դարձավ գերակայության դոկտրինի զարգացման հիմքը: Նմանապես, Կարծիք 1/00-ում ԵՄԱԴ-ը մատնանշեց ինտեգրումը որպես ԵՄ իրավունքի միասնական մեկնաբանման և կիրառման անհրաժեշտության պատճառ [Opinion 1/00, supra note 13, para. 2.]: Այս երկու օրինակները վերաբերում են Համայնքի իրավունքների ինտեգրմանը՝ որպես անդամ պետություններում համապատասխան կանոնների միասնականացման (ունիֆիկացման) միջոց:

Իր հերթին, Կարծիք 1/91-ում Դատարանը հղում կատարեց տնտեսական ինտեգրմանը՝ որպես Պայմանագրերի վերջնական նպատակի: Այն հայտարարեց, որ «ԵՏՀ պայմանագրից բխում է ..., որ այդ պայմանագիրը նպատակ ունի հասնել տնտեսական ինտեգրման, որը տանում է դեպի ներքին շուկայի և տնտեսական ու արժույթային միության ստեղծում» [Opinion 1/91, supra note 12, para. 17]: Դատարանի դիրքորոշումը Կարծիք 1/91-ում ինտեգրումը դիտարկում է որպես ԵՄ նպատակ: 2014 թվականին կայացված Կարծիք 2/13-ում ԵՄԱԴ-ը ճանաչեց ինտեգրման առանցքային դերը՝ նշելով, որ ԵՄ պայմանագրի 3-րդ հոդվածում ամրագրված ԵՄ նպատակները վստահված են մի շարք հիմնարար դրույթների, որոնք «... կառուցված են այնպես, որ նպաստեն յուրաքանչյուրն իր յուրահատուկ ոլորտում և իրեն հատուկ բնութագրիչներով ինտեգրման գործընթացի իրականացմանը, ինչը հենց ԵՄ-ի գոյության իմաստն է (raison d'être)» [Opinion 2/13, supra note 16, para. 172]: Հատկանշական է, որ Կարծիք 2/13-ը բացահայտեց հայեցակարգի նոր իմաստ՝ սահմանելով ինտեգրումը որպես գործընթաց: Բացի այդ, Դատարանը ոչ միայն ճանաչեց, որ ինտեգրումը ԵՄ գոյության պատճառն է, այլև որ ԵՄ մյուս բոլոր նպատակները ստորադասված են ինտեգրման ձեռքբերմանը:

Ակնհայտ է, որ եվրոպական ինտեգրման հայեցակարգին ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքում տրվում են բազմաթիվ իմաստներ: Դատարանն օգտագործում է իրավունքների ինտեգրման և տնտեսական ինտեգրման հասկացությունները: Դատարանը սահմանում է այս հայեցակարգը որպես նպատակ (կամ թիրախ), այլ ոչ թե արժեք, և այն ճանաչում է ինտեգրման շարունակական բնույթը՝ հղում անելով դրան որպես գործընթացի: Նաև թվում է, թե ԵՄԱԴ-ը ԵՄ ինտեգրացիոն նպատակները դիտարկում է որպես իրավաբանորեն պարտադիր ԵՄ ինստիտուտների համար, ինչը նշանակում է, որ ԵՄ ինստիտուտները իրավական պարտավորություն ունեն իրականացնել դրանք: Եթե ինտեգրման նպատակը դիտարկվում է

որպես իրավաբանորեն պարտադիր, ապա ԵՄ ինստիտուտները, ներառյալ ԵՄԱԴ-ը, պետք է գործեն այն իրագործելու համար:

ERTA-ի դոկտրինը

Ըստ Ռասմուսենի՝ խոշոր հակամարտություն առաջացավ այն ժամանակ, երբ ԵՀ Հանձնաժողովը պնդեց, որ արտաքին տնտեսական հարաբերություններում ԵՏՀ¹ պայմանագրով սահմանված Համայնքի (ԵՄ) լիազորությունների թվարկումը չպետք է մեկանաբանվի ճշտորեն, այլ պետք է դիտարկվի որպես ֆունկցիոնալ: Այսինքն, այն ցանկացած պահի պետք է արտացոլի Համայնքին վերապահված լիազորությունների «ներքին սպառումը» (օգտագործումը): Այս վեճը թվում էր սոսկ միջինստիտուցիոնալ հակամարտություն: Իրոք, չնայած այն փաստին, որ արտաքուստ գործը Հանձնաժողովի կողմից Նախարարների խորհրդի ակտի դեմ ներկայացված անվավեր ճանաչելու մասին հայց էր, ERTA-ի գործով ԵՄԱԴ ստիպված էր առնչվել այսպես կոչված՝ իշխանությունների բաժանման հակամարտության հետ: Հիմնական խնդիրն այն էր, թե արդյոք ԵՏՀ պայմանագիրը (պայմանավորված միայն լիազորությունների ներքին սպառման պահանջով) վերապահում էր Համայնքին (ԵՄ-ին) ընդհանուր, սակայն ենթադրյալ, այն է ոչ անմիջականորեն սահմանված արտաքին տնտեսական հարաբերությունների լիազորություն, թե այն կարող էր այդ ոլորտում գործ ունենալ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ միայն այն դեպքում, եթե Պայմանագրի որևէ դրույթ բացահայտորեն տալիս էր նրան այդ լիազորությունը: Սահմանադրական սկզբունքի մակարդակում Դատարանը վճռեց իր օգուտ ԵՄ-ի: Դրանով իսկ Դատարանը անդամ պետությունների տիրույթից դուրս բերեց (կտրեց) միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունների հսկայական շերտեր: Ինքնին վճռորոշ լինելով՝ ERTA-ի վեճի կարևորությունն, այնուամենայնիվ, կտրուկ աճեց, քանի որ այն ուժի մեջ մտավ մի ժամանակահատվածում, երբ նախկին դատական որոշումներով հաստատվել էր, որ.

- Համայնքային իրավունքը, որպես սկզբունք, ունի ուղղակի ազդեցություն (direct effects).
- Համայնքային իրավունքը գերակայում է դրան հակասող ազգային օրենքների նկատմամբ [Cf. case 26/62].
- Որոշակի հանգամանքներում Համայնքի՝ կարգավորելու լիազորությունը բացառում (կանխում) է (pre-empts) դրան մրցակից ազգային կարգավորող լիազորությունները [Cf. case 6/64; Costa v. E N E L]:

Առանց այս սկզբունքների առկայության, ERTA-ի գործի արդյունքը, բնականաբար, շատ ավելի պակաս կարևորություն կունենար:

¹ Եվրոպական տնտեսական համայնք (անգլերեն՝ *European Economic Community* — EEC), ԵՏՀ-ն ստեղծվել է 1957 թվականին Հռոմի պայմանագրով: ԵՏՀ-ն է հանդիսանում ներկայիս Եվրոպական միության նախահայրը:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դատարանի ERTA-ի դոկտրինը (ինչպես հետագայում հայտնի դարձավ այդ գործի արդյունքը) լուրջ պառակտումներ առաջացրեց Նախարարների խորհրդի որոշումների կայացման գործընթացում: Մի քանի անդամ պետությունների թշնամական վերաբերմունքն այդ սկզբունքի նկատմամբ չմեղմացավ մինչև անգամ տարիներ անց [Cf. Joseph Weiler]: Համայնքային զգալի օրենսդրական նախաձեռնություններ, օրինակ՝ բնապահպանական քաղաքականության ոլորտում, արգելափակվեցին և չընդունվեցին Խորհրդի կողմից: Հակառակորդ պետությունները գտնում էին, որ այդ ոլորտում ներքին լիազորությունների փոխանցումը Համայնքին *ipso facto*՝ հենց այդ փաստի ուժով կնշանակեր նաև արտաքին իրավասության փոխանցում, իսկ դա անընդունելի էր համարվում:

Դատարանը չի գործում օրենսդրական ընթացակարգերի շրջանակներում և, հետևաբար, ի վիճակի չէ որոշել օրենքների բովանդակությունը: Այնուամենայնիվ, այն իրականացնում է օրինականության վերահսկողություն՝ ապահովելով, որ օրենսդրությունը համապատասխանի առաջնային իրավունքին, և որ օրենսդիր մարմինները գործեն ԵՄ հիմնադիր պայմանագրերով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում: Երկրորդ՝ այն ապահովում է օրենսդիր մարմինների կողմից ընդունված օրենքների միասնականությունը: Իրականացնելով այս երկու գործառույթները՝ Դատարանը նպաստում է ինտեգրման ընդհանուր հաջողությանը և առանձնակի ուշադրություն է դարձնում, որ ԵՄ օրենքները ողջ Միության տարածքում մեկնաբանվեն միասնական կերպով:

Պայմանագրերը Դատարանին իրավունք են վերապահում ապահովել, որ Պայմանագրերի մեկնաբանման և կիրառման ընթացքում պահպանվի իրավունքը: Դատարանի համար «իրավունքի պահպանման» խնդիրը նշանակում է երկու տարրերի դիտարկում: Նախ՝ դա ինտեգրման գործընթացն է, որի իրագործման համար Պայմանագրերը սահմանել են բարդ ինստիտուցիոնալ կառուցվածք և իրավական կանոնների ամբողջական հավաքածու: Եթե ինստիտուտներին խոչընդոտեն իրականացնել իրենց գործառույթները, ինտեգրման գործընթացը կկանգնի արգելքի առաջ:

Երկրորդ՝ դա ԵՄ ինստիտուտների կողմից ինտեգրման գործընթացում իրենց գործառույթներն իրականացնելիս ընդունված օրենքների պահպանումն է: Ընդունված ԵՄ օրենքները ներկայացնում են ինտեգրման գործընթացի ամենաակնառու արդյունքը: Երբ համապատասխան ինստիտուտներն ընդունում են օրենքը, Դատարանի խնդիրն է դառնում ապահովել դրա միասնական մեկնաբանումն ու կիրառումը ԵՄ ողջ տարածքում, որպեսզի այն ունենա ինտեգրացիոն ազդեցություն: Դատարանի նախադեպերով՝ ԵՄ իրավունքի կողմից ստեղծված այս ինտեգրացիոն ազդեցությունը դրսևորվում է որպես սկզբունքների, կանոնների և փոխգործակցող իրավահարաբերությունների կառուցվածքային ցանց, որը կապում է ԵՄ-ն և նրա անդամ պետությունները, ինչպես նաև անդամ պետություններին միմյանց հետ: Սրանից հետևում է, որ եվրոպական ինտեգրումը ԵՄԱԴ-ի հիմնական գործառույթի՝ իրավունքի պահպանման առանցքում է:

Եզրակացություն

ԵՄԱԴ-ի նախադեպային որոշումները ոչ թե պարզապես մեկնաբանել են իրավունքը, այլ ստեղծել են այն: Դատարանը լրացրել է օրենսդրական բացերն այնտեղ, որտեղ անդամ պետությունները քաղաքական համաձայնության չէին գալիս: Իրավաբանական գրականության մեջ այս երևույթն անվանում են իրավունքի միջոցով ինտեգրում: Դատարանը ԵՄ իրավունքը չի տեսնում որպես առանձին կանոնների հավաքածու, այլ որպես միասնական, փոխկապակցված համակարգ:

Այսպիսով, ո՞րն է ԵՄԱԴ-ի գործառույթը ինտեգրման գործընթացում: Դատարանն իր նախադեպային որոշումներով հաստատել է, որ՝

- Օրենքն ինքնին բավարար չէ. այն պետք է ունենա ինտեգրացիոն ազդեցություն: Այդ ազդեցությունը երաշխավորում է Դատարանը՝ իր բացառիկ իրավասության միջոցով: Սա ուղղակիորեն հիմնավորում է ԵՄ ինքնավարության անհրաժեշտությունը:
- Դատարանի իր առաքելությունը վերջնականապես կապում է ինտեգրումը Դատարանի պաշտոնական լիազորության հետ, քանի որ պահպանել իրավունքը Դատարանի համար արդեն հավասարազոր է ինտեգրումը պաշտպանելուն:

Այսպիսով, ԵՄԱԴ-ն իր գործունեությամբ պաշտպանում է եվրոպական ինտեգրման ընդհանուր նպատակը: Հենց ԵՄԱԴ-ն է աստիճանաբար զարգացնում ինքնավարության սկզբունքը և ԵՄ իրավունքի էական բնութագրիչները՝ երաշխավորելու, որ իրավունքը պահպանվի Պայմանագրերի մեկնաբանման և կիրառման ընթացքում. նախ՝ ապահովելով ԵՄ իրավունքի միասնական մեկնաբանումը, երկրորդ՝ ապահովելով ԵՄ ինստիտուտների բնականոն գործունեությունը: ԵՄԱԴ իրեն վերապահել է օրենսդրական բացերը լրացնելու գործառույթ, որն ի սկզբանե նախատեսված չէր հիմնադիր փաստաթղթերով, և շարունակաբար ընդլայնում է ԵՄ իրավասությունների շրջանակը, ինչն իր հերթին ԵՄ տնտեսական միությունից արդեն իսկ վերածել է վերազգային իրավական համակարգի:

Եվ ի վերջո, վերը նշված եզրակացությունները հիմք են տալիս եզրահանգել, որ ԵՄԱԴ-ի այս գործողությունների հետևում ընկած է եվրոպական ինտեգրման ապագա խթանման ձգտումը:

Գրականության ցանկ

1. Alejandro Pizarroso Ceruti, “The European Court of Justice: Legal Interpretation and the Dynamics of European Integration,” *Columbia Journal of European Law* 25, no. 2 (2019) 254 p.,
2. Anu Bradford and Eric A. Posner, “Universal Exceptionalism in International Law,” *Harvard International Law Journal* 52 (2011), 54p.,
3. Hjalte Rasmussen, *On law and Policy in the European Court of Justice*, Martinus Nijhoff Publishers, P.O. Box 163, 3300 AD Dordrecht, the Netherlands, 1986, 555 p.,

4. Joel B. Grossman in Grossman and Tanenhaus (eds.), *Frontiers of Judicial Research* (Wiley and Sons), New York, 1969): A model for Judicial Policy Analysis, 408 p.,
5. O Hamulac, V. Stehlic, *European Union Constitutional Law*, Olomuc University of Poland, I Edition, 2013, 405 p.,
6. Cf. Joseph Weiler, *The Community System: The Dual Character of Supranationalism*, in *Yearbook of European Law* (I, 1981) 1982, pp. 295-297,
7. Case 6/64, *Flaminio Costa v. ENEL* [1964] EU:C:1964:66, p. 594,
8. Opinion 1/91, *supra* note 12, paras. 40-1,
9. Judgment of 9 July 1987, *Germany, France, Netherlands, Denmark and United Kingdom / Commission* (281, 283, 284, 285 and 287/85, ECR 1987 p. 3203),
10. Judgment of 13 September 2005, *Commission / Council* (C-176/03, ECR 2005 p. I-7879),
11. Judgment of 31 March 1971, *Commission / Council* (22/70, ECR 1971 p. 263). Opinion 1/94, of 15 November 1994 (ECR 1994 p. I-5267),
12. Opinion 1/76, *supra* note 17, paras. 18-22,
13. Opinion 1/91, *op. cit.*, para. 30, 35,
14. Opinion 1/00, *supra* note 13, para. 11,
15. Opinion 1/09, *supra* note 17, para. 66,
16. Opinion 2/13, *supra* note 16, paras. 158, 167, 169-70, 172, 175, 176, 198, 221-31, 258,
17. Case No 55092/16 *Baltic Master LTD. v. Lithuania*, 16 April 2019,
18. Cf. case 26/62 *van G end en L o o s*, Judgment of February 5 [1963] E .C .R . p. 1,
19. Cf. case 6/64; *Costa v. E N E L* , Judgment of July 15 [1964] E .C .R. p. 585,
20. Cf. case 22/70 *Commission v. Council*, Judgment of March 31, [1971] E .C .R . p. 263,
21. Cf. J.-V. Louis, G. Vandersanden, and M. Waelbroeck, in *Les Etats Membres et la jurisprudence de la Cour* (ed. Université de Bruxelles, 1981) p. 69,
22. Document 11992M/TXT *Treaty on European Union* OJ C 191, 29.7.1992, pp. 1–112, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:11992M/TXT>, 10.04.2026,
23. Opinion 1/94, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:61994CV0001>, 10.04.2026.

THE ROLE OF THE CJEU IN THE PROCESS OF EUROPEAN INTEGRATION

Armenuhi Harutyunyan

Researcher

EUA, Chair of Public and International Law

arm1.harut@gmail.com

Abstract

Since the very inception of the European Communities, the Court of Justice of the European Union (CJEU) has actively promoted the idea of integration and has served as one of its most significant catalysts. The underlying motives of European integration have exerted a decisive influence on the judgments of the Court of Justice of the European Union. Through its case-law, the Court of Justice of the European Union has formulated the most fundamental characteristic of the principle of autonomy of the EU legal order: the fact that the EU operates independently of the national laws of its Member States. In this regard, the principle of the autonomy of the European Union legal order has become a subject of special study in this article. The significance of this principle is further underscored by its pervasive operation across all stages of both the creation and application of EU law. In this context, the academic community has raised various questions, such as: why integration holds such profound significance in the jurisprudence of the CJEU, what its place within the system of EU legal norms, and whether European integration can be conceptualized as a value, in itself or rather as an ultimate objective of the EU. This article is dedicated to addressing these critical inquiries and examining the diverse, at times contradictory, perspectives surrounding them, which ultimately reveal the role of the Court of Justice of the European Union in the consolidation of the EU and its impact on integration processes."

Keywords: Court of justice of the European Union, European integration, case law of the CJEU, treaty on the Functioning of the European Union, autonomy of the EU legal order, supranational organization.

Ներկայացվել է՝ 20.04.2026թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 27.04.2026թ.